ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 37

«27» 08 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի N 22 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահագն Ժուլվերի Մուրադյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնից ազատելու և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի պաշտոնում նշանակելու ու Արսեն Ռուբիկի Մարտիրոսյանին Լոռու մարզի դատախազի պաշտոնից ազատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնում նշանակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 29.08.2018թ. N 286-Ա և 21.08.2019թ. N 159-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 93 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 22 հրամանում.

«Մուրադյան Վահագն Ժուլվերի - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետ»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

«Մարտիրոսյան Արսեն Ռուբիկի - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետ»:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ